ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1:

Հեռ.՝ (374 10) 510910, 8686,

Ֆաքս՝(374 10) 538904

E-mail: bank@aeb.am

Տարեկան հաշվետվություն 2018թ., 30 ապրիլի 2019թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) և արտոնյալ բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)

արժեթղթերի քանակը՝ սովորական բաժնետոմս՝ 1,852,533 արտոնյալ բաժնետոմս՝ 424,600

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ սովորական բաժնետոմս՝ 10,400 ՀՀ դրամ արտոնյալ բաժնետոմս՝ 15,000 ՀՀ դրամ

«Մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է բանկը»:

ստորագրող անձինք՝

Արտակ Առաքելյան	Գործադիր տնօրենի տեղակալ-գանձապետ		30.04.2019թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Օնիկ Չիչյան	Կորպորատիվ և մանրածախ բիզնեսի գծով տնօրենի տեղակալ		30.04.2019թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ռուբեն Բաղալյան	Գործառնական գծով տնօրենի տեղակալ		30.04.2019թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Աստղիկ Մանրիկյան	Միջազգային և զարգացման գծով տնօրենի տեղակալ		30.04.2019թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արփինե Փիլոսյան	Տեխնոլոգիաների և անվտանգության գծով տնօրենի տեղակալ		30.04.2019թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Միքայել Պողոսյան	Գլխավոր հաշվապահ		30.04.2019թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Հայկ Ավետիսյան	Ռազմավարության և ռիսկերի կառավարման վարչության պետ		30.04.2019թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Վրեժ Ջհանգիրյան	Իրավաբանական վարչության պետ		30.04.2019թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արամ Խաչատրյան	Գործադիր տնօրեն		30.04.2019թ..
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 4/7
«Իմպերիում Պլազա» բիզնես
կենտրոն, 7-րդ հարկ

Հեռ՝ +374 10 52 65 20
Ֆաքս՝ +374 10 52 75 20
www.deloitte.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին՝

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, ինչպես նաև դրանց առնչվող ծանոթագրությունները, պատրաստվել են «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Մեր կարծիքով, կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ համաձայն ծանոթագրություն 3-ում նկարագրված հիմունքների:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (ՖՀՄՍ) պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ աուդիտորի եզրակացության ընթերցմանը:

Աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունները և դրա վերաբերյալ մեր եզրակացությունը

2019 թ. ապրիլի 30-ին ներկայացված մեր եզրակացության մեջ արտահայտել ենք մեր չձևափոխված կարծիքը աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Եզրակացությունը նաև ներառում է՝

- Աուդիտի առանցքային հարցերի վերաբերյալ հաղորդակցությունը: Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, ըստ մեր մասնագիտական դատողության՝ առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ընկերությունների ցանցը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «ԴելոյթԹուշԹոմացուԼիմիթեդ»-ի, նրա անդամ ընկերությունների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte. am/about:
© 2019 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է ծանոթագրություն 3-ում նկարագրված հիմունքով աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ամփոփ տարբերակը կազմելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ առ այն, որ դրանք բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմնվելով Աուդիտի միջազգային ստանդարտ (ԱՄՍ) 810՝ «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» ստանդարտի համաձայն իրականացված ընթացակարգերի վրա:

Սիբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն
«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ

Արփինե Ղևոնդյան
Աուդիտի տնօրեն

Երևան, Հայաստանի Հանրապետություն
Ապրիլի 30, 2019 թ.

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	2018 թ.	2017 թ.
Տոկոսային եկամուտ	17,664,310	14,362,831
Տոկոսային ծախս	(8,922,279)	(7,281,637)
Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստները	**8,742,031**	**7,081,194**
Տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստներ	(435,226)	(161,436)
Զուտ տոկոսային եկամուտ	**8,306,805**	**6,919,758**
Զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից	169,791	(231,661)
Վճարներ և կոմիսիոն եկամուտներ	2,125,762	1,799,812
Վճարներ և կոմիսիոն ծախսեր	(489,913)	(461,819)
Զուտ օգուտ արտարժույթով առևտրից	851,058	1,046,286
Զուտ օգուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչումից	741,354	533,283
Այլ ակտիվների/պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գծով պահուստի վերականգնում	18,969	-
Այլ եկամուտ	268,002	478,068
Զուտ ոչ տոկոսային եկամուտ	**3,685,023**	**3,163,969**
Գործառնական եկամուտ	**11,991,828**	**10,083,727**
Անձնակազմի գծով ծախսեր	(4,144,498)	(3,815,344)
Հիմնական միջոցների մաշվածություն	(665,863)	(575,634)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	(50,283)	(38,902)
Այլ ծախսեր	(4,478,468)	(3,618,191)
Գործառնական ծախսեր	**(9,339,112)**	**(8,048,071)**
Շահույթը նախքան շահութահարկով հարկումը	**2,652,716**	**2,035,656**
Շահութահարկի գծով ծախս	(574,690)	(485,259)
Տարվա շահույթ	**2,078,026**	**1,550,397**
Այլ համապարփակ եկամուտ		
Շահույթում կամ վնասում վերադասակարգման ոչ ենթակա հոդվածներ		
Հիմնական միջոցների վերագնահատում		
Վերագնահատմանը վերաբերող շահութահարկ	4,306	-
Շահույթում կամ վնասում վերադասակարգման ենթակա հոդվածներ		
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից զուտ օգուտ տարվա համար	368,625	912,045
Տարվա ընթացքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչման մասով վերադասակարգման ճշգրտում	(633,682)	(563,536)
Տարվա զուտ օգուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից	18,811	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներին վերաբերող շահութահարկ	49,249	(69,209)
Ընդամենը տարվա այլ համապարփակ եկամուտ նախքան շահութահարկով հարկումը	**(192,691)**	**279,300**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	**1,885,335**	**1,829,697**
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ		
Բազային	0.97	0.84
Նոսրացված	0.97	0.84

Հաստատված է 2019 թ. ապրիլի 30-ին հրապարակման համար:

Արայիկ Խաչատրյան
Գործադիր տնօրեն

Միքայել Պողոսյան
Ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ

Ապրիլի 30, 2019 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Տես ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	2018 թ. դեկտեմբերի 31	2017 թ. դեկտեմբերի 31
Ակտիվներ՝		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	38,158,045	35,824,831
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	17,468	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,175,950	13,030,610
Հակադարձ հետգնման պայմանագրեր	3,882,703	4,296,862
Հաճախորդներին տրված վարկեր և կանխավճարներ	133,629,775	104,216,558
Ներդրումային արժեթղթեր	19,752,226	21,704,806
Հիմնական միջոցներ	10,330,854	9,304,697
Ոչ նյութական ակտիվներ	506,593	321,118
Այլ ակտիվներ	2,243,783	2,103,317
Ընդամենը ակտիվներ	**221,697,397**	**190,802,799**
Պարտավորություններ և սեփական կապիտալ		
Պարտավորություններ՝		
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	-	7,706
Թողարկված պարտքային արժեթղթեր	2,060,960	1,068,764
Հետգնման պայմանագրեր	20,519,048	20,511,989
Այլ փոխառու միջոցներ	64,200,798	39,531,118
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	95,828,768	91,703,898
Շահութահարկի գծով վճարման ենթակա գումարներ	273,836	373,239
Հետաձգված հարկային պարտավորություններ	849,982	1,096,006
Ստորադաս վարկեր	3,382,149	6,409,601
Այլ պարտավորություններ	1,568,539	1,071,870
Ընդամենը պարտավորություններ	**188,684,080**	**161,774,191**
Սեփական կապիտալ՝		
Բաժնետիրական կապիտալ	22,266,343	13,708,745
Էմիսիոն եկամուտ	-	33,438
Վերագնահատման հավելաճ	3,055,334	3,157,777
Գլխավոր պահուստ	3,000,000	6,000,000
Ներդրումների վերագնահատման պահուստ	1,501,220	1,531,277
Չբաշխված շահույթ	3,190,420	4,597,371
Ընդամենը սեփական կապիտալ	**33,013,317**	**29,028,608**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**221,697,397**	**190,802,799**

Տես ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	Բաժնե-տիրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Գլխավոր պահուստ	Հիմնական միջոցների վերագն. Պահուստ	Ներդրումնե րի վերագն. պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2017 թ. հունվարի 1-ի դրությամբ	**4,631,333**	**9,110,850**	**6,000,000**	**3,264,437**	**1,251,977**	**3,310,821**	**27,569,418**
Տարվա շահույթ	-	-	-	-	-	1,550,397	**1,550,397**
Տարվա այլ համապարփակ եկամուտ, առանց շահութահարկի	-	-	-	-	279,300	-	**279,300**
Վերագնահատման պահուստի մաշվածության փոխանցում, առանց շահութահարկի	-	-	-	(106,660)	-	106,660	-
Հայտարարագրված շահաբաժիններ	-	-	-	-	-	(370,507)	**(370,507)**
Էմիսիոն եկամտից փոխանցում բաժնետիրական կապիտալին	9,077,412	(9,077,412)	-	-	-	-	-
Մնացորդը 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (նախկինում ներկայացված)	**13,708,745**	**33,438**	**6,000,000**	**3,157,777**	**1,531,277**	**4,597,371**	**29,028,608**
ՖՀՄՍ 9-ին անցում կատարելու ազդեցությունը	-	-	-	-	166,940	(557,248)	**(390,308)**
Վերահաշվարկված	**13,708,745**	**33,438**	**6,000,000**	**3,157,777**	**1,698,217**	**4,040,123**	**28,638,300**
Տարվա շահույթ	-	-	-	-	-	2,078,026	**2,078,026**
Տարվա այլ համապարփակ եկամուտ, առանց շահութահարկի	-	-	-	4,306	(196,997)	-	**(192,691)**
Վերագնահատման պահուստի մաշվածության փոխանցում, առանց շահութահարկի	-	-	-	(106,749)	-	106,749	-
Արտոնյալ բաժնետոմսերի թողարկում	3,000,000	-	-	-	-	-	**3,000,000**
Հայտարարագրված շահաբաժիններ	-	-	-	-	-	(510,318)	**(510,318)**
Ներքին շարժ	5,557,598	(33,438)	(3,000,000)	-	-	(2,524,160)	-
Մնացորդը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**22,266,343**	**-**	**3,000,000**	**3,055,334**	**1,501,220**	**3,190,420**	**33,013,317**

Տես ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ

	2018 թ.	2017 թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Տարվա շահույթ	2,078,026	1,550,397
Ճշգրտումներ՝		
Շահութահարկի գծով ծախս	574,690	485,259
Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստներ	435,226	155,678
Այլ ակտիվների/պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գծով պահուստի վերականգնում	(18,969)	-
Մաշվածություն և ամորտիզացիա	716,146	614,535
Հիմնական միջոցների օտարումից վնաս	19,421	17,969
Եկամուտ դրամաշնորհներից	-	(240)
Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս	38,625	(276,643)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ	(741,354)	(533,283)
Այլ եկամուտ	(8,536)	-
Գործառնական գործունեությունից ստացված դրամական ներհոսք՝ նախքան գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխությունները	**3,093,275**	**2,013,672**
Գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխություններ		
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում.		
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(341,402)	(5,319,747)
Հակադարձ հետգնման պայմանագրեր	414,196	255,565
Հաճախորդներին տրված վարկեր	(30,617,959)	(28,720,245)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	(1,651)	-
Այլ ակտիվներ	(141,364)	(596,946)
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում).		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	816,675
Հետգնման պայմանագրեր	7,324	7,287,234
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	4,683,868	25,071,374
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	(7,696)	-
Այլ պարտավորություններ	333,498	(44,802)
Գործառնական գործունեությունում օգտագործված/գործառնական գործունեությունից դրամական միջոցներ՝ նախքան հարկումը	**(22,577,911)**	**762,780**
Վճարված շահութահարկ	(768,985)	(71,619)
Գործառնական գործունեությունում օգտագործված/գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ	**(23,346,896)**	**691,161**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(5,471,920)	(10,783,114)
Մինչև մարման ժամկետը պահվող ֆին. ակտիվների ձեռքբերում	-	(50,169)
Ներդրումային արժեթղթերի վաճառքից մուտքեր	7,902,154	6,192,862
Հիմնական միջոցների ձեռքբերում	(2,091,328)	(1,533,327)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	379,887	72,089
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(235,758)	(128,757)
Ներդրումային գործունեությունից ստացված/(գործունեությունում օգտագործված) զուտ դրամական միջոցներ	**483,035**	**(6,230,416)**

Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Ստորադաս պարտքից մուտքեր	(3,026,027)	1,009,429
Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր	991,753	-
Այլ փոխառու միջոցներ	24,854,167	8,645,403
Արտոնյալ բաժնետոմսերի թողարկում	3,000,000	-
Վճարված շահաբաժիններ	(379,731)	(338,365)
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	**25,440,162**	**9,316,467**
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդների վրա	(206,725)	(12,210)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	**2,369,576**	**3,765,002**
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեսկզբի դրությամբ	**35,824,831**	**32,059,829**
Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեվերջի դրությամբ	**38,194,407**	**35,824,831**

Տես ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

1. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, ինչպես նաև նրանց առնչվող ծանոթագրությունները, պատրաստվել են «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

2. ԲԱՆԿԸ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») հիմնվել է 1991 թ. Հայաստանի Հանրապետությունում ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական Հանրապետական բանկի (1991-1993 թ.-ին «Հայպետբանկ» ՓԲԸ) հիման վրա և 1995 թ.-ին վերակազմավորվել որպես բաց բաժնետիրական ընկերության: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ և այն գործում է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից տրամադրված թիվ 1 արտոնագրի հիման վրա:

Բանկն ընդունում է ավանդներ, տրամադրում վարկեր, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց մատուցում է այլ բանկային ծառայություններ:

Բանկի գլխամասային գրասենյակը և թվով 27 մասնաճյուղերը գտնվում են Երևանում, 20 մասնաճյուղեր՝ ՀՀ տարբեր մարզերում և 1 մասնաճյուղ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Ամիրյան 23/1:

3. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված ամբողջական, աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար ղեկավարությունից պահանջվում է որոշել այն տեղեկատվության ծավալը, որն անհրաժեշտ է արտացոլել ամփոփ ֆինանսական հաշվետվություններում, որպեսզի դրանք բոլոր էական առումներով համապատասխանեն աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին կամ ներկայացնեն դրանց ճշմարտացի ամփոփումը:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ղեկավարության կողմից՝ հիմնվելով հետևյալ չափանիշների վրա՝

(ա) արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկությունները համապատասխանում են ամբողջական աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկություններին, և

(բ) արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով պարունակում են այն ողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է ամբողջական ֆինանսական հաշվետվություններում և դրանց կից ծանոթագրություններում ներառված տեղեկատվությունը խեղաթյուրված կամ ոչ հստակ ներկայացնելուց խուսափելու համար:

Լինելով ամփոփ և խմբավորված՝ սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն կարող լիակատար պատկերացում ապահովել Բանկի ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի վերաբերյալ: Բանկի ամբողջական աուդիտ անցած համախմբված ֆինանսական հաշվետվությունները հասանելի են ըստ պահանջի՝ Բանկին դիմելու միջոցով:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հաշվետու տարվա գործունեությունը գնահատելով՝ փաստենք, որ, բանկը որդեգրած ռազմավարության հետևողական իրականացման, կորպորատիվ կառավարման, ներքին հսկողության համակարգի բարձր մակարդակի և ռիսկերի կառավարման օպտիմալ ռազմավարության ընտրության շնորհիվ կարողացավ դիմակայել առկա մրցակցությանը և զարգացման մարտահրավերներին՝ ապահովելով գործունեության հիմնական ցուցանիշների էական աճ և կարևոր որակական տեղաշարժեր:

Բանկի՝ որպես կայացած և հեռանկարային ֆինանսական կառույցի, գնահատականը պետք է համարել նաև «Moody's Investors Service» ընկերության կողմից «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ին ռեյտինգների շնորհման, ինչպես նաև ISO/IEC 27001 (Տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգ) հավաստագրի ստացման փաստը, որը մեծ հեռանկարներ է բացում բանկի միջազգային ճանաչման, միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ համագործակցության էլ ավելի խորացման և բանկի հետագա զարգացման տեսանկյունից:

Հաշվետու տարում Բանկի կանոնադրական հիմնադրամը համալրվեց 3,000,000 հազ. ՀՀ դրամով, Բանկի էմիսիոն եկամուտներից՝ 33,438,300 ՀՀ դրամ, չբաշխված շահույթից՝ 2,524,160,700 ՀՀ դրամ և Գլխավոր պահուստից՝ 3,000,000,000 ՀՀ դրամ ուղղվեց կանոնադրական կապիտալի ավելացմանը, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմեց 22,266,343,200 ՀՀ դրամ և դրա հաշվին 3,000 ՀՀ դրամի չափով ավելացավ մեկ սովորական բաժնետոմսի անվանական արժեքը՝ 7,400 ՀՀ դրամից դառնալով 10,400 ՀՀ դրամ, գործարկվեցին «ՄԱԼԱԹԻԱ» և «ՆՈՐԱԳԱՎԻԹ» մասնաճյուղերը, ինչպես նաև «Ապագայի բանկ» նախագծի շրջանակներում գործարկվեց առանց սպասարկող անձնակազմի՝ հաճախորդների շուրջօրյա ավտոմատ սպասարկում իրականացնող մասնաճյուղ: Բանկը ներդրեց «Mobile Banking» ծառայությունը, թողարկեց ARMEC's քարտեր, ArCa Classic MIR տեսակի համատեղ քարտեր: <<Ազգային Հիփոթեքային Ընկերություն>> ՎՎԿ ՓԲԸ և <<Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան>> պետական նպատակային ծրագրի շրջանակներում տրամադրվող վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերի գծով «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի հետ համատեղ առաջինը հայաստանյան բանկային համակարգում ներդրվեց կանխավճարի ապահովագրության պրոդուկտը, որը հիփոթեքային վարկը դարձնում է առավել մատչելի սպառողին՝ շնորհիվ վճարվող ցածր կանխավճարի չափի: Բանկը 2011թ.-ից հանդիսանալով «Visa» միջազգային վճարահաշվարկային համակարգի անդամ, թողարկելով և սպասարկելով «Visa» քարտեր՝ 2018թ. ձեռք բերվեց նաև «Visa» միջազգային վճարահաշվարկային համակարգի կողմից անկանխիկ գործարքների սպասարկման արտոնագիր:

Հաշվետու տարին արդյունավետ էր նաև միջազգային ֆինանսավարկային կառույցների հետ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համագործակցության առումով. ընդլայնվեցին գործող ծրագրերը և ծավալվեց գործակցություն նոր բանկային ծառայությունների ոլորտում:

Այսպես. ՎԶԵԲ-ի «Արևելյան Գործընկերության Կանայք Բիզնեսում Վարկավորման Ծրագրի» շրջանակներում «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և ՎԶԵԲ-ի միջև կնքվեց 2.0 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամով Վարկային պայմանագիր, որով ներգրավված միջոցներն ուղղվելու են կանանց ղեկավարությամբ կամ մասնակցությամբ գործող ՀՀ միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորմանն ու զարգացմանը: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի և սինգապուրյան «EFA Group» ընկերության կողմից կառավարվող Սինգապուրում տեղակայված և գրանցված «EFA Financial Institutions Debt Fund PTE.» Ltd. ներդրումային ընկերության միջև կնքվեց 2.5 մլն. ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որով ներգրավված միջոցները

ուղղվելու են ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորմանը: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն շվեյցարական «BlueOrchard Finance S.A.» ընկերության կողմից կառավարվող Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում տեղակայված և գրանցված «BlueOrchard Microfinance Fund, S.A.» ներդրումային ընկերությունից նեգրավեց 8 մլն. ԱՄՆ դոլարի չափով և 3 մլն. Եվրոյի չափով միջոցներ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հանդիսանում է ՀՀ բանկային համակարգի արդյունավետ զարգացող օղակներից մեկը, որը վերջին քսան տարիներին գործել է շահույթով: Նշվածը հատկանշական է, հաշվի առնելով ՀՀ տնտեսության զարգացման ընդհանուր իրավիճակը և բանկային համակարգում դրսևորված միտումները:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ գործունեություն է ծավալում բանկային ծառայությունների մատուցման բոլոր ոլորտներում: Բանկը իր կայուն դիրքերն ունի թե արտարժութային, թե արժեթղթերի, թե միջբանկային շուկաներում: Բանկը ակտիվ գործունեություն է ծավալում թե վարկավորման, թե ծառայությունների մատուցման, թե փոխանցումների նոր ձևերի, թե պլաստիկ քարտերի սպասարկման ոլորտներում:

Ռիսկերի կառավարման օպտիմալ համակարգի առկայությունը էապես նպաստում է Բանկի հեռանկարային և կարճաժամկետ նպատակների իրականացմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացմանը:

Բանկում ռիսկերի կառավարման մշակույթը ենթարկվում է շարունակական կատարելագործման՝ ելնելով ռիսկերի ընդունելի մակարդակի և ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցության պայմաններում կայուն, հուսալի, արդյունավետ և ապահով գործունեության ծավալման նպատակներից:

Բանկում գործող ռիսկերի կառավարման համակարգը հիմնված է Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի համաձայնագրերի, ISO/IEC 27001 (Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգ) միջազգային ստանդարտի դրույթների և նմանատիպ այլ պահանջների վրա, որը հանդիսանում է համակարգի արդյունավետ գործունեության երաշխիքներից մեկը:

Կառավարման իրավասու մարմինների կողմից սահմանվում են ռիսկերի ընդունելի մակարդակները (ռիսկի ախորժակ), որոնց շրջանակներում գործունեության ծավալումը, ընթացիկ և ռազմավարական նպատակների իրականացման արդյունքում, Բանկի համար կապահովի կայուն և արդյունավետ զարգացում:

Ռիսկերի կառավարման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից՝ Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերի նույնականացում, գնահատում, հսկողություն, հաղորդակցում-հաշվետվություն և գնահատված ռիսկերին արձագանքում: Տնտեսամաթեմատիկական մոդելավորման գործիքների կիրառման, գործընթացների կանոնակարգման, վերլուծության, կանխատեսման և ներքին հսկողության համակարգի մշտական կատարելագործման արդյունքում՝ Բանկը հնարավորություն է ստանում ռիսկերի կառավարման համակարգի միջոցով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցությունը՝ Բանկի զարգացման կշռադատված ռազմավարության պայմաններում բացառելով կամ նվազագույնի հասցնելով Բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստները և ապահովելով գործող նորմատիվային դաշտի պահանջները:

Ռիսկերի կառավարման հիմնական սկզբունքները, առանձին ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոտեցումները, մեթոդաբանությունները և մոդելները սահմանված են բանկի ներքին իրավական ակտերում:

Բանկի համախառն ռիսկը կառավարվում է համապատասխան տնտեսամաթեմատիկական մոդելի հիման վրա՝ արտարժութային, վարկային, իրացվելիության և տոկոսադրույքի փոփոխման ռիսկերի և դրանց գումարային՝ համախառն ռիսկի էական չափերի (մակարդակների) սահմանման և մոնիտորինգի միջոցով:

Համաձայն ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ռիսկերի կառավարման քաղաքականության» պահանջների, հաշվի առնելով Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի և GARP-ի (Generally Accepted Risk Principles) ռիսկերի կառավարման սկզբունքները՝ բանկում մշակվել և ներդրվել են հետևյալ հիմնական ռիսկատեսակների գնահատման և կառավարման մոդելները.

- վարկային ռիսկ,
- տոկոսադրույքների փոփոխման ռիսկ,
- իրացվելիության ռիսկ,
- արտարժութային ռիսկ,
- գնային ռիսկ,
- գործառնական ռիսկ:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը վարկի, հաշվարկված տոկոսի կամ դրանց մի մասի պայմանագրով սահմանված ժամկետներից ուշացման կամ անվերադարձելիության հնարավոր վտանգն է՝ պայմանավորված վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացմամբ, գրավի արժեզրկմամբ և նման այլ պատճառներով:

Բանկի վարկային պորտֆելի կառուցվածքի հնարավոր տարբեր փոփոխությունների ազդեցությունները Բանկի գործունեության ընթացիկ ցուցանիշների վրա վերլուծվում և գնահատվում է սթրես թեստավորման և տարբեր հավանական սցենարների դիտարկման միջոցով: Վերոնշյալ սթրեսային սցենարների վերլուծության շրջանակներում իրականացվում է նաև նորմատիվների խախտման կրիտիկական կետերի հաշվարկ և վերլուծություն, որը տեղեկատվություն է տալիս տվյալ օրվա դրությամբ նորմատիվների խախտման հավանականության՝ որպես վարկային ռիսկի յուրօրինակ գնահատականի վերաբերյալ:

Վարկային պորտֆելի որակի մշտադիտարկման նպատակով իրականացվում է ըստ վարկատեսակների միջին կշռված փաստացի տոկոսադրույքների և չաշխատող վարկերի տեսակարար կշիռների հարաբերակցությունների դինամիկայի վերլուծություն, ինչպես նաև վարկերի դասակարգման (դասերի միջև) միգրացիոն հոսքերի և դրանց փոփոխությունների ամսական ուսումնասիրություն:

Վարկային ռիսկի կառավարման արդյունավետ համակարգի շնորհիվ բանկի վարկային պորտֆելը շարունակում է պահպանել ավանդական բարձր որակը և ցածր ռիսկայնության աստիճանը:

Տոկոսադրույքների փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի փոփոխման (տոկոսադրույքի) ռիսկը բանկի զուտ տոկոսային եկամտի կամ կապիտալի տնտեսական արժեքի վրա շուկայական տոկոսադրույքների փոփոխման բացասական ազդեցության հավանականությունն է:

Միջազգային պրակտիկայում լայն տարածում գտած «GAP մոդելի» միջոցով տոկոսադրույքների փոփոխության ռիսկը գնահատվում է տոկոսադրույքների փոփոխման նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների դիսբալանսի և ժամկետայնության

ճեղքվածքների վերլուծության հիման վրա: «Դյուրացիայի մոդելի» հիման վրա տոկոսադրույքի փոփոխման ռիսկը գնահատվում է ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնության ցուցանիշների կիրառմամբ՝ դիտարկելով դյուրացիան որպես տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ ակտիվների և պարտավորությունների ներկա արժեքների զգայունության գնահատման գործիք:

Իրականացվում է նաև առանձին արժույթներով արտահայտված ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքների վերլուծություն՝ զուտ տոկոսային եկամտի վրա դրանց տոկոսադրույքների փոփոխության ազդեցության տեսանկյունից:

Նշված մոդելները հնարավորություն են տալիս ակտիվների և պարտավորությունների դյուրացիաների վերլուծության միջոցով իրականացնել ակտիվների և պարտավորությունների օպտիմալ կառավարում՝ հեջավորելով տոկոսադրույքի ռիսկը:

Եռամսյակային և տարեկան կտրվածքով իրականացվում է տոկոսադրույքների փոփոխության՝ Բանկի զուտ տոկոսային եկամտի և կապիտալի վրա ազդեցության սցենարային վերլուծություն, ինչպես նաև սթրես թեստավորում, որոնց արդյունքները ներառվում են Բանկի հրապարակվող միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում և այլ հաշվետվություններում:

<u>Իրացվելիության ռիսկ</u>

Իրացվելիության ռիսկը հավանականությունն է, որ բանկն ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարել իր պարտատերերի պահանջներն՝ առանց լրացուցիչ կորուստներ կրելու:

Ժամկետայնության ճեղքվածքների հիմնադրույթի կիրառման հիման վրա Բանկում ներդրված իրացվելիության ցուցանիշների գնահատման և կառավարման մեթոդաբանությունը հնարավորություն է ընձեռում հաշվարկված ակնթարթային, մինչև 90 օր և մինչև 1 տարի կուտակային իրացվելիության ցուցանիշների ժամանակային շարքերի հիման վրա գնահատել ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքների ազդեցությունը Բանկի իրացվելիության վրա, որը հիմք է հանդիսանում ակտիվների և պարտավորությունների կառավարման օպտիմալ որոշումների կայացման համար:

Սթրես թեստավորման սցենարային մոդելը հնարավորություն է տալիս գնահատել իրացվելիության նորմատիվների վրա շոկային տարբեր հնարավոր իրավիճակների ազդեցությունը՝ վերլուծելով ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների որոշակի բաժնեմասի պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջման և ցպահանջ պարտավորությունների որոշակի բաժնեմասի ետ պահանջման դեպքում (ինչպես նաև նշված բաժնեմասերի տարբեր հնարավոր համակցությունների դեպքում) նորմատիվների փոփոխությունները և դրանց խախտման հավանականությունը: Նորմատիվների խախտման կրիտիկական կետերի հաշվարկումը հնարավորություն է տալիս ստանալ բանկի իրացվելիության ռիսկի այլընտրանքային գնահատականներ՝ վերլուծելով ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամկետային ավանդների պայմանագրի ժամկետից շուտ ետ պահանջման և ցպահանջ պարտավորությունների ետ պահանջման ազդեցությունը նորմատիվների վրա և վերջիններիս խախտման հավանականությունները:

Բանկի կողմից ներգրավված ցպահանջ և ժամկետային միջոցների կենտրոնացումների ռիսկի գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը, քվանտիլային վերլուծության հիման վրա, հնարավորություն է տալիս գնահատել ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների կենտրոնացումների մակարդակները: Մշակված մեթոդաբանության շրջանակներում իրականացվում է նաև սթրես թեստերի սցենարային

վելուծություն, որը ներառում է խոշորագույն 10% հաճախորդ ֆիզիկական և իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների արտահոսքի ազդեցությունները նորմատիվների վրա, ինչպես նաև հաճախորդների վերոհիշյալ չորս խմբերից (ժամկետային ավանդ ներդրած ֆիզիկական և իրավաբանական անձինք, ցպահանջ ավանդ ներդրած ֆիզիկական և իրավաբանական անձինք) յուրաքանչյուրի 1%-ի ավանդների արտահոսքի գումարային ազդեցությունը տնտեսական նորմատիվների վրա: Իրացվելիության կառավարման շրջանակներում դիտարկվում են նաև որոշակի շեմային ծավալից ավելի միջոցներ ներդրած խոշոր իրավաբանական և ֆիզիկական անձ առանձին հաճախորդների, ինչպես նաև դրանց խմբերի միջոցների արտահոսքի սցենարային վերլուծությունները, որի արդյունքում ևս գնահատվում է միջոցների արտահոսքի ազդեցությունը նորմատիվների ընթացիկ մակարդակների վրա:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկը արտարժույթի փոխարժեքների տատանման արդյունքում Բանկի կորուստներ կրելու հավանականությունն է:

Բանկում արտարժութային ռիսկի կառավարումն իրականացվում է կիրառելով միջազգային պրակտիկայում ընդունված VAR մեթոդաբանությունը, ինչպես նաև սթրես թեստերի սցենարային վերլուծության մեթոդները: Սթրես թեստերի սցենարային վերլուծություններում դիտարկվում է արտարժույթի փոխարժեքի կտրուկ տատանման ազդեցությունը նորմատիվների վրա: Դիտարկվում են՝ ՀՀ դրամի արժեվորման և արժեզրկման սթրեսային սցենարներ, ինչպես նաև ըստ առանձին արտարժույթների փոխարժեքների տատանման սցենարային համակցության վատագույն սցենարի տարբերակը, որի դեպքում հնարավոր վնասը կկազմի առավելագույնը:

Արտարժութային ռիսկի կառավարման նպատակով կիրառվող VAR մեթոդաբանության հիմքի վրա մշակված արտարժույթների փոխարժեքների տատանումներից հնարավոր առավելագույն վնասների գնահատման տնտեսամաթեմատիկական մոդելը հնարավորություն է տալիս գնահատել Բանկի բաց դիրքերով պայմանավորված հնարավոր կորուստների ռիսկը:

Արտարժույթի փոխարժեքների փոփոխության ազդեցությունը Բանկի շահույթի վրա գնահատվում է նաև եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ սթրես թեստերի սցենարային վերլուծության միջոցով, որի արդյունքները ներառվում են Բանկի հրապարակվող միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

Գնային ռիսկ

Գնային ռիսկը որևէ բորսայում(ներում) ցուցակված, բանկի հաշվեկշռում շուկայական ընթացիկ գներով արտացոլվող կապիտալի գործիքների շուկայական գների անբարենպաստ փոփոխությունների հետևանքով Բանկի կողմից ֆինանսական կորուստներ կրելու վտանգն է՝ պայմանավորված ինչպես տվյալ կապիտալի գործիքի և դրա թողարկողի, այնպես էլ շուկայում շրջանառվող կապիտալի գործիքների շուկայական գների ընդհանուր տատանումների հետ կապված գործոններով (տվյալ կապիտալի գործիքի գծով երկար կամ կարճ դիրքի առկայության պայմաններում):

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում.

- ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում,

- հնարավոր կորուստների գնահատում,
- հեջավորման գործիքների կիրառում,
- ֆինանսական գործիքների գծով լիմիտների (ըստ կապիտալի գործիքներով գործառնության տեսակի, ըստ դիլերի, ըստ թողարկողի, stop-loss) սահմանում,
- կապիտալի գործիքների փաթեթի բազմազանեցում (դիվերսիֆիկացիա)՝ ըստ թողարկողի, տնտեսության ճյուղերի, ժամկետայնության և այլն:

Գործառնական ռիսկ

Բանկի յուրաքանչյուր բիզնես-գործընթաց պարունակում է որոշակի մակարդակի գործառնական ռիսկ, որը կարող է հանգեցնել ինչպես փոքր, այնպես էլ Բանկի համար էական չափերի հասնող կորուստների: Նշված հանգամանքով է պայմանավորված գործառնական ռիսկի արդյունավետ կառավարման կարևորությունը բանկերի համար: Բանկի ռիսկերի կառավարման ոլորտը կանոնակարգող ներքին իրավական ակտերով գործառնական ռիսկը սահմանվում է որպես ուղղակի կամ անուղղակի կորուստների վտանգ (հնարավորություն)՝ առաջացած կամ պայմանավորված Բանկի անձնակազմի ոչ համարժեք կամ սխալ գործողություններով, բանկային գործընթացների կազմակերպման և կատարման թերություններով, խափանումներով, ինչպես նաև անբարենպաստ արտաքին միջավայրի գործողություններով և իրավիճակներով:

Գործառնական ռիսկի վերահսկողության արդյունավետ համակարգի կիրառումն այդ ռիսկի օպտիմալ կառավարման կարևորագույն գործոններից է, որն ապահովվում է օրական հսկողության իրականացման, պարբերական և թեմատիկ ստուգումների միջոցով գործող կանոնակարգվածության մակարդակի պատշաճության գնահատման, կանոնակարգման կարիք ունեցող գործառույթների վերհանման, հնարավոր ռիսկերի բացահայտման և պատասխանատու մարմիններին դրանց մասին տեղեկացման միջոցով:

Հաշվետու տարում բանկը շարունակել է իր որդեգրած քաղաքականությունը հաճախորդների բնագավառում՝ պահպանելով փոխշահավետության սկզբունքը՝ հաճախորդներին առաջարկել բանկային ծառայությունների ընդգրկուն փաթեթ, մշտապես նորացնելով և բազմազանելով այն, բարելավելով ծառայությունների մատուցման որակը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ համար հիմնական մրցակիցներ են հանդիսանում ՀՀ-ում գործունեություն ծավալող բոլոր բանկերը, բացառությամբ Մելլաթ բանկի, ինչպես նաև վարկային պրոդուկտների շուկայում՝ որոշ վարկային կազմակերպություններ: Մրցակցության ընթացքում հիմնական մեթոդներն են՝ բանկային նոր տեխնոլոգիաների կիրառում, մատուցվող ծառայությունների տեսակների ընդլայնում և որակի բարձրացում, ներգրավումային և ներդրումային մրցունակ տոկոսադրույքների կիրառում, ինչպես նաև ճկուն սակագնային քաղաքականության վարում:

Հաշվի առնելով բանկի կայուն զարգացման ռազմավարության շարունակականությունը, ապագա ծրագրավորվող գործունեությունը նպատակաուղղված է լինելու բանկի դիրքի ամրապնդմանը և ընդլայնմանը ՀՀ բանկային շուկայում, միջազգային շուկաներ դուրս գալու հնարավորության ուսումնասիրմանը, որը հիմնականում նախատեսում է ակտիվների հետագա կայուն աճ /կանխատեսվում է 25-30%-ի տարեկան աճ/, ինչպես ներգրավված ռեսուրսների /ավանդներ, միջազգային վարկային ծրագրեր/, այնպես էլ ձևավորած շահույթի և սեփական կապիտալի հաշվին:

Բանկը նախատեսում է ընդլայնել իր համագործակցությունը նաև միջազգային ֆինանսական այլ կազմակերպությունների, հատկապես ՎԶԵԲ, ՄՖԿ, Գերմանա-հայկական հիմնադրամ (ԳՀՀ), Սևծովյան Առևտրի և Զարգացման Բանկի և FMO-ի, Ասիական Զարգացման Բանկի, «BLUEORCHARD MICROFINANCE FUND» LLC ներդրումային ընկերության, «SYMBIOTICS» SA, «MICRO, SMALL & MEDIUM ENTERPRISES BONDS» S.A., DEG – Deutsche Investitions- und Entwicklungsgesellschaft mbH ֆինանսական հաստատությունների, «INCOFIN CVBA» ներդրումային ընկերության, FRANKFURT SCHOOL FINANCIAL SERVICES GMBH ընկերության հետ՝ փոքր և միջին բիզնեսի վարկավորման հետ զուգահեռ առավել արագ կզարգանա հիփոթեքային վարկավորման համատեղ ծրագրերի իրականացումը, ինչպես նաև նոր ոլորտների վարկավորման ծրագրերը:

Առաջիկա ծրագրավորվող եկամուտների աճի հիմնական մասը նախատեսվում է ստանալ տոկոսային եկամուտներց, ավելացնելով մատուցվող ծառայություններից ձևավորվող եկամուտները: Վարկերից տոկոսային եկամուտների ավելացման ուղղությամբ կատարվում է նոր վարկային տեխնոլոգիաների ուսումնասիրում և ներդրում:

Մատուցվող ծառայություններից եկամուտների ավելացման համար իրականացվում է դրանց բազմազանում, պլաստիկ քարտերով ծառայությունների ցանկի ընդլայնում:

Նշված խնդիրների իրականացման համար բանկը շարունակելու է տեխնիկայի պարբերական վերազինումը, ընթացակարգերի կատարելագործումը, նոր բանկային տեխնոլոգիաների ներդրումը՝ առանձնահատուկ շեշտը դնելով սպասարկման գործիքակազմում ժամանակակից բարձր թվային տեխնոլոգիաների կիրառման վրա, ինչը հնարավորություն կտա ապահովել հաճախորդների ավելի արագ, որակյալ և շուրջօրյա սպասարկում:

Բանկը, որպեսզի առավելագույնս օգտագործի տնտեսության առկա հնարավորությունները, ապահովելով բարձր մրցունակություն ֆինանսաբանկային շուկայում, շարունակելու է մատուցել ունիվերսալ բանկային ծառայություններ:

Արդյունավետ զարգացման կարևորագույն նախապայմաններից համարելով առաջատար փորձի և նոր բանկային տեխնոլոգիաների ներդրումը՝ ավարտին է հասցվելու «Internet Banking» ծառայության ներդնումը, շարունակական զարգացվելու է «Mobile Banking» ծառայությունը:

Ընդլայնվելու են վճարահաշվարկային նոր ծառայությունների մատուցումը, պլաստիկ /ինչպես տեղական, այնպես էլ միջազգային/ քարտերով սպասարկումը և այլն:

Տարածքային քաղաքականության շրջանակներում կշարունակվի մասնաճյուղային ցանցի ընդլայնումը, նպատակ ունենալով ապահովել բանկի ներկայությունը հանրապետության ողջ տարածքով, ինչպես նաև գործող մասնաճյուղերի վերակառուցումն ու վերանորոգումը:

Հիմնական բացասական գործոնները, որոնք կարող են որոշակի ազդեցություն թողնել բանկի գործունեության վրա՝ քաղաքական–տնտեսական գործընթացներն են՝ երկրի տնտեսության հետագա զարգացման միտումները:

Նշված ռիսկերը մեղմելու համար բանկը շարունակելու է վարել հավասարակշռված ներգրավումային և ներդրումային քաղաքականություն, հնարավորինս կանխատեսելով զարգացման միտումները, դիվերսիֆիկացնելով ռիսկը, ընդլայնելով ծառայությունների ցանկը, խուսափելով վարկային և ավանդային պորտֆելների կենտրոնացումներից:

Բանկը մեծ ուշադրություն է դարձնում բանկային նոր ծրագրերի ներդրման, գործող ծրագրերի կատարելագործման խնդիրներին: Բանկում նոր տեխնոլոգիաների ներդրումը և զարգացումը կրում է ծրագրավորված բնույթ: Ըստ առանձին բանկային ծառայությունների

ոլորտների, ուսումնասիրվում է առաջատար համաշխարհային փորձը, կատարվում է մարքեթինգային ուսումնասիրություն դրա նկատմամբ, ապահովվում է ծառայությունների և տեխնոլոգիաների ներդրման հստակ ընթացակարգերի մշակումը՝ իրականացնելով նաև ներդրման փորձաքննություն:

Բանկում մշտական աշխատանքներ են ծավալվում նոր ծառայությունների, սպասարկման որակի բարելավման ուղղությամբ, հաշվի առնելով հաճախորդների հարցումների արդյունքները: